

3108



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան



«18» 03 2025թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 063 - 25

Նախաձեռնող՝

«ԼՈՒՔ» ՍՊԸ

ք. Երևան, Նոր Նորք, Միկոյան փ., 13 շենք, 42 բն

Գործունեությունը՝

Ամբերդ բնակավայրում դպրոցի կառուցում

Արմավիրի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 063 - 25

«18» Մայրիս 2025թ.

**Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ԼՈՒՔ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Ամբերդ բնակավայր

**Ներածական մաս.** «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Ամբերդ բնակավայրում կառուցել դպրոց:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի սահմաններում՝ հյուսիսարևմտյան մասում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 938.0-939.0 մետրի սահմաններում: Տարածքում ստորգետնյա ջրերը գտնվում են 4.2-4.9 մ-ից ցածր հորիզոններում: Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը և այլն, բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:



Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ բնակավայրում: Նոր դպրոցը նախատեսվում է կառուցել գործող դպրոցի տարածքում: Վերջինս նախատեսվում է ապամոնտաժել նոր մասնաշենքերի կառուցումից հետո:

Դպրոցը նախատեսվում է կառուցել եռահարկ, բաղկացած 4 մասնաշենքից՝ 288 աշակերտի համար, որը կունենա 12 դասարան և 8 մասնագիտացված կաբինետներ:

Առաջին հարկում կլինեն 1-ին, 2-րդ և 5-րդ դասարանների դասասենյակները, ներառական կրթության սենյակը, տարրական դպրոցի մարզասրահ-խաղասենյակը, կենսաբանության և քիմիայի կաբինետներն իրենց լաբորատորիաներով, ճաշասրահը, հանդիսությունների դահլիճ՝ հանդերձարաններով, տնօրենի աշխատասենյակը և քարտուղարությունը, բժշկի սենյակը, տարրական, միջին և ավագ դպրոցի տղաների, աղջիկների և հաշմանդամների համար նախատեսված սանհանգույցները և այլն:

Երկրորդ հարկում տեղակայված կլինեն 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների դասասենյակները, տարրական դպրոցի ուսուցչանոցը, շախմատի դասասենյակը, երկարօրյա խմբի սենյակը, ֆիզիկայի կաբինետը՝ իր լաբորատորիայով, միջին և ավագ դպրոցի ուսուցչանոցը, ռազմագիտության կաբինետը, զենքի պահոցը, ռոբոտաշինության կաբինետը, տնավարության կաբինետը, համակարգչային կաբինետը, սանհանգույցները և այլն:

Երրորդ հարկում կլինեն 8-12-րդ դասարանների դասասենյակները, օտար լեզուների կաբինետը, գծագրության և կերպարվեստի կաբինետը, գրադարանի ընթերցասրահը, գրապահոցը, անհատական պարապմունքների սենյակները, սանհանգույցները և այլն:

Նկուղային հարկում տեղակայված կլինեն սանհանգույց և օժանդակ սենքեր:

Նոր դպրոցում նախատեսված են հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի համար հարմարեցված թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն:

Դպրոցն ապահովված է լինելու էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, հրդեհային ազդարարման և տեսահսկման համակարգերով և այլ ենթակառուցվածքներով: Կառուցվի նոր կաթսայատուն: Դպրոցի միջանցքներում և սրահներում նախատեսվում են չսայթակող կերամոզերանիտե հատակներ, դասասենյակներում և դահլիճներում՝ վինիլային հատակներ: Ներքին հարդարման աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերից:

Շենքի տանիքն իրականացված է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Դպրոցի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով: Դպրոցում նախատեսվում է ընդհանուր օդափոխության մեխանիկական դրդմամբ համակարգեր:

Դպրոցում նախագծվել է սառը, տաք ջրամատակարարման, ջրահեռացման և տանիքի անձրևաջրերի հեռացման ցանցեր: Դպրոցի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ջրագծից, տաք ջրամատակարարումը՝ դպրոցի տարածքում նախատեսվող կաթսայատնից:

Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս կհավաքվեն և կհեռացվեն ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Այնուհետև միացվելու են տարածքում նախատեսվող «Տոպաս-150» կեղտաջրերի մաքրման կայանին:

Դպրոցի շենքի էլեկտրամատակարարումն իրականացվելու է «ՀԷՅ» ՓԲԸ-ի կողմից:

Գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից:

Նոր դպրոցի տանիքին նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային կայան: Արևային ֆոտովոլտային համակարգը նախատեսված է դպրոցի էլեկտրական էներգիայի



արտադրության, լուսավորության և այլ ծախսերի փոխհատուցման նպատակով: Նախատեսված է կառուցել 119.88 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայան, որը բաղկացած կլինի 4 ենթակայաններից:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի մակերես՝ 17602 քմ,
- կառուցապատման մակերես՝ 4788.7 քմ,
- կանաչապատման մակերես՝ 10404.9 քմ,
- անջրանցիկ տարածքներ՝ 2408.6 քմ,
- մասնաշենքերի թիվը՝ 4, տարողունակություն՝ 288 աշակերտ:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 7530 խմ, որից հետլիցքը՝ 4400 խմ, իսկ ավելացած 3130 խմ հողային զանգվածը կհեռացվի Խոյի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Դպրոցի տարածքում նախատեսվում է ծաղկանոցի և սիզամարգերի հիմնում, նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով: Ուսումնասիրելով տեղանքի բնակլիմայական պայմանները, կանաչապատման համար դպրոցի տարածքում տնկվելու են 47-50 հատ ծառեր /եղևնի, կաղնի, թխկի/, 38-40 հատ թփուտներ/ տուա, սամշիտ, բարբարիս/: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Դպրոցի կանաչապատ տարածքի ոռոգումը կազմակերպելու համար նախատեսվում է տեղադրել ջրի ռեզերվուար: Շահագործման փուլում նախատեսվում է ոռոգման նպատակով օգտագործել ցնցուղային սարքավորումներ: Բացի այդ, իրականացվելու է նաև անձրևաջրերի հոսքերի ուղղորդում դեպի կանաչ տարածքներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Նախատեսվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ հողային ռեսուրսների վրա չեն կանխատեսվում, քանի որ նախագծվող դպրոցը կառուցվելու է արդեն իսկ հին դպրոցի շենքով ծանրաբեռնված հողամասում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի Խոյի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր, կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող



ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Առկայության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները տեսակավորել և օգտագործել որպես երկրորդային հումք:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շինհրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների վլացման և մաքրման միջոցառումներ՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտակա հանգույցներից և այլն:

**Պատճառաբանական մաս.** Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսմանը գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, Խոյի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:



## Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Խոյի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԼՈՒՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ բնակավայրի դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սվետլանա Կիզիրյան